ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2021

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը
Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ *չկա:***

Քիչ հեռվում՝ ուղիղ իմ դիմաց, Արարատն է՝ մեր պատմության մեծ որբն(1) ու տարրագիրը(2)՝ իր երկու երկնաքերծ(3) գագաթներով: Ալևարս(4) այս լեռը երևի աշխարհի ամենաբարձր սարն է. հայ մարդուն նա երևում է աշխարհի բոլոր ծագերից(5): Տարական(6) ճշմարտություն է այն, որ կարոտում են հարազատին: Դեռ չեմ լսել, որ որևէ(7) թուրք կարոտի այս սարին: Իսկ ուղաբերձ(8) բարդիների կատարներին թևածող արագիլները սաստկացնում են հոգուդ(9) ցավը:

1) 1, 2, 5, 6, 8, 9
2) 2, 3, 5, 7, 9
3) 2, 3, 4, 6, 7, 8
4) 1, 3, 5, 7, 9

2 **Ո՞ր շարքի բոլոր բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) «ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆ» ՇՔԱՆՇԱՆ, ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
2) ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԴԻՆԱՍՏԻԱ, ԽԱՄԱՃԻԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
3) ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, ՏՐԴԱՏ ԵՐՐՈՐԴ, ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔ, ՍԱՐԻԱՆՅԱՆ ԻՋՎԱԾՔ
4) ԹԱԴԵՎՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ջ:***

1) անզի-ում, ար-առ, հաղար-, գեղ-կուհի
2) լա-վարդ, աղջամուղ-, թր-ոց, գո-ի
3) խառնիճաղան-, քրքի-, բա-կոն, բաղար-
4) ալո-ենի, ա-լիկ, հորջոր-ել, ստեր-

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում սղում կա:**

1) դեղնակտուց, ակնոցավոր, մարդկություն, կցակառույց
2) կապտաթույր, պատրանք, եկեղեցական, ձանձրույթ
3) պատմական, բարենպաստ, դյուցազներգություն, գործնական
4) փափկասուն, կանխատեսել, գունապնակ, վարչակարգ

5 **Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ *չկա:***

1) քաղցրասեր, մեկընդմեջ, սանրել
2) մատնաչափ, ծանրամարտ, աննկատելի
3) ակնդետ, վերջնագիր, ըմբոշխնել
4) երբեմնի, ծաղկածիծաղ, գերծանր

6 **Ո՞ր շարքում բաց վանկ ունեցող բառ *չկա:***

1) կսկիծ, հայտնել, նրբերանգ, ճարպիկ
2) ձեռնարկել, գերդաստան, ընկույզ, նիրհել
3) նշմարվել, հազվագյուտ, դիպված, կպչուն
4) կշտամբել, սրտմտանք, կոպտել, կրպակ

7 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

1) Բարձր տների պատուհաններում Պայծառ լույսերը հանգչում են մեկ-մեկ:
2) Արևի ճառագայթները հաճելիորեն ջերմացնում էին անօթևան ճամփորդների մարմինները:
3) Քանի որ հայրս հետաքրքիր զրուցակից էր, միշտ իր խոսքով գերում էր սեղանակիցներին:
4) Կարծես թե դարձել եմ ես տուն, Բոլորն առաջվանն է կրկին…

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածանցավոր:**

1) հորթարած, գնդակ, սփռոց, ալյակ
2) վարձկան, ճամփորդ, կառույց, սակագին
3) արգելակ, կիսատ, ցավագին, պատանեկան
4) լայնակի, հայրենի, հոսանք, նամակ

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ:**

1) բյուրեղապակի, քաղցրահունչ, սարալանջ, մեծագույն
2) ոչինչ, ասուլիս, սնանկ, առատաձեռն
3) այլազգի, ոսկեդար, օդաչու, հեծանիվ
4) սիգապանծ, ջրածին, հանածո, քեռայր

10 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:**

1) **հովեկ** – ամառանոց եկած մարդ, **շարական** – հոգևոր երգ
2) **շեղբ** – դանակի կտրող մաս, **սողնակ** – դուռը փակելու ձող
3) **վարգ** – ձիու համաչափ ընթացք, **բնօրրան** – թագավորանիստ քաղաք
4) **թեզ** – գիտական աշխատանք, **ավետիս** – լավ լուր

11 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) կիսաշրջան= կես+ա+շ(ու)րջ+ան
2) հետաքննչական= հետ+ա+քն(ի)ն+(ի)չ+ական
3) տեսականի=տես+ակ+անի
4) առաջնություն= առաջ+(ի)ն+ություն

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:**

1) բանավան, բուժանձնակազմ, զինադադար, պետեկամուտ
2) ժողդատարան, զինծառայող, գիտխորհուրդ, շինջոկատ
3) նորընտիր, կուստոմս, քաղբանտարկյալ, տնտհաշվարկ
4) ուսմասվար, մարզկենտրոն, գրապահոց, սոցհարցում

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) գարուն, որմնասյուն, ընդմիջում, արարում
2) նախադուռ, գումարում, արյուն, նուռ
3) դերանուն, ամառ, շարժում, ձիաբեռ
4) շնաձուկ, սառցալեռ, հաստատում, մանուկ

14 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Մի օր էլ մեծատուն հարևանի շեմքով ներս մտավ Սոնան՝ հարսի քողը երեսին:
2) Ո՞վ կմտածեր, թե մի քանի ժամ անց զեփյուռը պիտի փոխվեր մոլեգին փոթորկի:
3) Բախտը ինձնից թռավ գնաց Վերջալույսի շողերի մեջ:
4) Ամեն տեղ այդ սերը ծիծեռնակի պես ճռվողում էր, մինչև հասունացան նրանք:

15 **Ո՞ր նախադասության մեջ անկախ դերբայ *չկա:***

1) Գրիգորը սաստիկ բարկանում էր, երբ սպիտակ պատերի վրա մատիտի խզբզոցներ էր նկատում:
2) Մի քանի տարի հետո Արես աստծու միջամտությամբ փրկված Թանատոսը Սիզիփոսին տանում է մեռյալների աշխարհը:
3) Սիզիփոսին հարկադրում են լեռան բարձր կատարը հավերժորեն գլորել ծանր քարը, որն ամեն անգամ գահավիժում էր ստորոտ:
4) Ինչ որ ասում եմ, ասողն ասել է, Ասել պրծել է ինձնից առաջ:

16 **Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ *չկա:***

1) Եղյամն էր սունկի գլուխն արծաթում, Մրսում էր կարծես վայրի նշենին...
2) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
3) Մշուշի միջից՝ տեսի՜լ դյութական. Բացվում է կրկին Նաիրին տրտում:
4) Նա շատ բարձր էր գնահատում իր ջանքերը, որոնցով նրան բարձրացրել էր մինչև իր մակարդակը:

17 **Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայ *չկա:***

1) Առանց ընկճելու երկրի թշնամուն Նրա սուրը երբեք չի մտել պատյան:
2) Իմ ճամփան անվախճան մի գիշեր, Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա:
3) Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան, Եվ այնքան ներում՝ ո՞ր երկրի սրտում:
4) Հետևում են քեզ, երբ արյուն ունես, Իսկ երբ ցամաքես, կմոռանան քեզ:

18 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

……. Մարգարիտայի ոտքերը հպվեցին խոնավ խոտին, երաժշտությունն ուռենիների տակ անմիջապես ուժգնացավ, և կայծերի խուրձն առավել հախուռն սլացավ խարույկն ի վեր:

1) Հենց որ
2) Քանի դեռ
3) Թեև
4) Չնայած

19 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Այդ ամառ նա գնացել էր առողջարան՝ ոսկրացավը բուժելու:
2) Ես կրկին նստել եմ պատուհանի առջև ու նայում եմ անտառին:
3) Այստեղ էին անցել նրա մանկության երազ օրերը:
4) Նախքան պատվիրակների ժամանելը ամեն ինչ պատրաստ էր:

20 **Ո՞ր շարքում թվական *չկա:***

1) ութական, այդչափ, երիցս
2) ինչքան, վեցերորդ, միլիոնանոց
3) հազարամյա, եռոտանի, միլիարդ
4) հարյուրավոր, հնգակի, տասնյակ

21 **Ո՞րն է բարդ նախադասություն:**

1) Իրեն խլացրած, չլսելով արտույտների երգը և չզգալով հովի զնգոցը լեռնային վճիտ օդում՝ փոքր հորեղբայրս գնաց դեպի ձին:
2) Բացվում է հեքիաթային մի աշխարհ՝ անկրկնելի գեղեցկություններով, վեհատեսիլ Արագածով, փրփրաբաշ ջրերով ու վիթխարի ժայռերով:
3) Ահա երբեմնի փողոցը. ամեն գարնան հեղեղը, խորացնելով հունը, տարիների ընթացքում դարձրել է խորխորատ:
4) Սմբատին ասես անսպասելիորեն արթնացրել էին խոր քնից՝ ցույց տալով իր նախնիների փառապանծ անցյալը:

22 **Բաց թողած տեղերում ո՞ր տարբերակի բառաձևերը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Արաքսը ……., հոսում դանդաղ, խոհուն, իսկ հեռվում՝ երկնահուպ բարդիների ……. , ……. բներ …….:

1) վշշում է, կատարներին, արագիլների, են նշմարվում
2) վշշալով, կատարները, արագիլի, նշմարեցին
3) վշշում էր, կատարը, արագիլներով, է նշմարվում
4) վշշալիս, կատարներին, արագիլի, էին նշմարված

23 **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված *չէ:***

1) Եթե <u>զգույշ քայլելով</u> ես ջուրը մտնում, ուրեմն լողորդ չես:
2) Կիսավեր վանքի <u>ամբողջովին մամռակալած</u> պատերի տակ կուչ էր եկել մի պառավ և աղոթում էր:
3) Եթե ամռանը ծանծաղուտը խանգարում էր <u>խոտերի վրա շունչ առնելուն</u>, ապա մենք տեղափոխվում էինք մյուս ափ:
4) Այդ ակնթարթներն ինձ ձմռան երազի գիշերներ թվացին, ձմռան, քանի որ <u>վախենալուց բացի</u> ես նաև մրսում էի:

24 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Բավականաչափ կրթություն ստացած լինելու դեպքում նա կարող էր լավ հրապարակախոս լինել:*
   Եթե բավականաչափ կրթություն ստացած լիներ, նա կարող էր լինել լավ հրապարակախոս:
2) *Ըստ Ձեզ՝ Փարիզը չտեսած մարդը չի՞ կարող դատողություններ անել գեղեցկության մասին:*
   Ըստ Ձեզ՝ եթե մարդը Փարիզը չի տեսել, չի՞ կարող դատողություններ անել գեղեցկության մասին:
3) *Կնոջը հմայք տվող զարդերը տղամարդուն նողկալի են դարձնում:*
   Այն զարդերը, որոնք հմայք են տալիս կնոջը, տղամարդուն նողկալի են դարձնում:
4) *Ստախոսների հիմնական փաստարկներից մեկը մեռած մարդուն վկայակոչելն է:*
   Ստախոսների հիմնական փաստարկներից մեկն այն է, որ վկայակոչում են մեռած մարդուն:

25 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Միակ ուղևորը, որ լռելյայն նստած էր լաստանավի աջ եզրին, մի ձեռքով խաղում էր նավակողի հետ, մյուսով՝ ջրի ալիքների հետ և ասես շոյում էր չարաճճի ալիքները, որոնք հրում էին իրար ու մի վայրկյանում անհետանում:



26 **Ո՞ր նախադասության մեջ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Եվ որպես գերին հլու իր բեռին Տանում եմ կյանքիս օրերն անվրդով:
2) Սպարապետը որպես հայրենանվեր գործիչ սիրված էր իր զինվորների կողմից:
3) Որպես նենգ մի հյուր սողոսկել ամրոց լոկ կեղտոտ դավեր նյութելու համար:
4) Դու մոտեցար որպես քույր Ու հեռանում ես ահա…

27 **Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:**

1) Երբ մտավ շուկա, խանութպանների եռուզեռում մի <u>անկարգություն</u> նկատեց:
2) Ուրիշ բլբուլ կգա, կմտնի <u>բաղը</u>:
3) Սի՞թե ինձ այլևս չես վստահում, <u>թագուհի՛</u>:
4) <u>Ի՞նչ</u> է մնում գնացողին, Ի՞նչ է մնում ինձ անելու:

28 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Աղջիկը հեռանում է՝ բարակ մեջքը թեքած կժի ծանրության կողմը, ու նայողին թվում է՝ նրա ուսերն անզոր են պահելու այդ ծանր կուժը՝ աղջկական երազներով ու հույզերով լցված:
2) Նա, թվում էր, շփոթված է և չի կարողանում մտքերը հստակ ձևակերպել:
3) Լինելով չափից դուրս անմիջական բնավորության տեր, ունենալով զգայուն հոգի՝ աղջիկը չէր կարողանում կեղծել իրեն, և նստել էր՝ ատամներն իրար սեղմած, տխուր:
4) Օմար Խայամը՝ Խորասանի փառաբանված բանաստեղծը, նստած ծաղիկների մեջ, գինի էր ըմպում:

29 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Մրսում էր միայնակ թռչունը. փշանման ցցվել էին նրա փետուրները:
2. Եվ ինքնասույզ խորհում էր նա, որ կյանքը տառապանք է, սակայն ապրելու կամքը՝ էլ ավելի:
3. Ձյունապատ բարձունքներից և դեղնած լեռնալանջերից թավալվում էր սառնաշունչ քամին:
4. Քաղցած էր նա, և քաղցն ավելի էր տանջում նրան, քան ցուրտը:

1) 2, 3 ,1, 4
2) 3, 1, 4, 2
3) 3, 2, 4, 1
4) 2, 1, 4, 3

30 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Ծաղկի պես կարմիր, հրասիրտ, զվարթ
Բացվել է այսօր սիրտս նահիրյան
Աշխարհի սրտում,
Թեժ, կարմիր սրտում վառվող աշխարհի:

1) փոխաբերություն
2) մակդիր
3) բաղաձայնույթ
4) շրջադասություն

31 **Պնդումներից որո՞ւմ սխալ *չկա:***

1) Մեսրոպ Մաշտոցը իր ստեղծած նշանագրերը դասավորեց ասորական այբուբենի տառերի հաջորդականությամբ:
2) Հռոփանոս անունով մի հույն գեղագրից բերված նշանագրերը դարձան մեսրոպյան այբուբենի ստեղծման հիմքը:
3) Դանիել եպիսկոպոսի օգնությամբ Մաշտոցը որոշակի ոճ ու տեսք տվեց իր ստեղծած գրերին:
4) Դանիելյան նշանագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք բավարար չափով ճիշտ չեն արտահայտում հայերեն բառերի հնչյունները:

32 **Ո՞ր հատվածը Ե. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմից *չէ:***

1) Եվ չէինք հիշում այլևս ոչինչ,
Եվ չգիտեինք՝ ինչ էինք անում:
2) Թե մի՞ֆ էիր դու… Եկան, երգեցին
Մի հին իրիկուն գուսանները ծեր…
3) Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
4) Որ- տիեզերքի զառանցանքը մառ
Չցնդի՜ երբեք ու մնա- երազ…

33 **Ա. Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

1) Արտիստն ինքնասպան է լինում գիշերով կողոպտվելու հաջորդ օրը:
2) Լևոնի հայրն աշխատել էր թատրոնում որպես վարսավիր:
3) Արտիստի հայրն անպատասխան սիրո զոհ էր դարձել, իսկ որդին կարծես հոր սխալը կրկնելու ուղին էր բռնել:
4) Լևոնը երազում էր մեկնել Իտալիա՝ թաքցնելով, սակայն, որ մեկնելու նպատակը Լուիզային մոտ լինելն է:

34 **Հատվածներից ո՞րը Հ. Սահյանի որ բանաստեղծությունից է:**

ա. Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա…
Ես եմ մնում լոկ իբրև հուշ
Եվ իբրև վկա:

բ. Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սողոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

գ. Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ…

դ. Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

1. «Օրը մթնեց»
2. «Անունդ տալիս»
3. «Անտառում»
4. «Մասրենին»

1) ա–1, բ–3, գ–2, դ–4
2) ա–4, բ–1, գ–2, դ–3
3) ա–1, բ–4, գ–2, դ–3
4) ա–4, բ–1, գ–3, դ–2

35 **Գ. Զոհրապի «Ճիտին պարտքը» նովելի ավարտի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Երբ որոշ չափով շտկվել էր ընտանիքի նյութական վիճակը, մահանում է Հուսեփ աղայի կինը:
2) Հուսեփ աղան մի օր դուրս է գալիս տնից և անհետանում քաղաքից՝ աղջիկներին և կնոջը թողնելով ծայրահեղ աղքատության մեջ:
3) Երկար ժամանակ գործ չգտնելուց հետո վերջապես հաջող առևտրական գործարք կնքած Հուսեփ աղան տուն վերադառնալիս հանկարծամահ է լինում:
4) Հուսահատության ծայրակետին հասած Հուսեփ աղան, քարերով լցնելով պայուսակը, կապում է վզից և կամրջից նետվում ջուրը:

36 **Նշվածներից ո՞րը պոեմ *չէ:***

1) «Բիբլիական» (Հ. Շիրազ)
2) «Հարճը» (Դ. Վարուժան)
3) «Օտար, ամայի ճամփեքի վրա» (Ա. Իսահակյան)
4) «Թմկաբերդի առումը» (Հ. Թումանյան)

37 **Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում ո՞վ է Անուշին ասում.**

Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կգա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,
Ա՜խ նա գնաց, նա գնա՜ց…

1) Անուշի մայրը
2) ծերունին
3) անցվոր ախպերը
4) ընկերուհիները

38 **Ա. Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի սյուժետային դրվագներից որո՞ւմ սխալ *չկա:***

1) Տարիներ անց Խոնարհը փնտրում և գտնում է իրենց գյուղի նախկին ուսուցչին:
2) Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու:
3) Տասներկու տարի անց կրկին գյուղ եկած հերոսը հանդիպում է Խոնարհին և ճանաչում նրան:
4) Խոնարհը մերժում է ուսուցչի սերը և ամուսնանում ուրիշի հետ:

39 **Բանաստեղծություններից քանիսի՞ հեղինակն է Մ. Մեծարենցը:**

«Հունձք կը ժողվեմ», «Իրիկունը», «Մեղուները» «Հայորդիներ», «Սիրերգ», «Ձմրան պարզ գիշեր», «Տրտունջք», «Տո՜ւր ինձի, Տե՛ր...», «Հյուղը»:

40 **Շարքերից քանիսի՞ բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը կամ տառակապակցությունը:**

- հն–աբան, պատն–շ, մանր–ազերծ, առ–ջաթել
- ող–ասաց, ջրար–ի, խա–կանք, հղ–անալ
- վար–աբեկել, սայթա–ել, փա–ցնել, մա–աղել
- գանգու–, ա–համարհել, գրաբա–, կե–ոն
- տար–երջ, հոգ–իճակ, ագ–ազ, դափն–արդ

41 **Շարքերից քանիսի՞ բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- պաղատել, թախանձել, խնդրել, աղաչել
- փոս, վիրապ, վեմ, խրամատ
- ոստնել, ցատկել, թռչել, գայթել
- քողարկել, թաքցնել, ծածկել, սքողել

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- Այսօր գթանք իրարու, Խեղճ լինենք ու չամաչենք:
- Ինքդ կիմանաս այդ ամենը, երբ ծնողներիդ կտակած կարողությունը ձեռք բերես:
- Ամեն ինչից զգացվում էր, որ նա կարոտ էր բարի խոսքի, ջերմ վերաբերմունքի:
- Իմ հիմնական գործն այսուհետև բոլորին լսելն է ու նրանց ցանկությունները կատարելը:

43 **Տրված բառերից քանիսի՞ հոգնակին է կազմվում -*եր* վերջավորությամբ.**

հարթաչափ, սպի, սերմնացան, կողոսկր, գանձարկղ, որթատունկ, փայտահատ, ժամացույց, հարսնաքույր:

44 **Տրված նախադասության մեջ քանի՞ միջակետ պիտի դրվի:**

Ըստ կուսակալի ներքին վերլուծությունների իրենց ծանրությամբ իրոք լիովին անհամեմատելի են Բարրաբայի ու Յեշուայի հանցանքները եթե երկրորդը բացահայտ խելագար մի մարդ մեղավոր է անհեթեթ ճառեր արտասանելու հարցում որոնք տարբեր տեղերում միայն խռովություն են հրահրել առաջինի մեղքն անչափ ծանր է խռովության բացահայտ կոչեր է թույլ տվել իրեն նաև սպանել է պահակախմբի զինվորներից մեկին դա անկասկած նրան առավել վտանգավոր է դարձնում:

45 **Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.**

1. ***բաց աչքով***– անսպասելիորեն, 2. ***աչք փակել*** – չտեսնելու տալ, 3. ***ջրի երես հանել*** – բացահայտել, 4. ***երես ծռել*** – նվաստանալով խնդրել, 5. ***աչքը ջուր կտրել*** – կարոտով, անհամբերությամբ սպասել, 6. ***սիրտ առնել*** – սիրաշահել:

46 **Ո՞ր բառերն են գրվում գծիկով.**

1. հուշարձան(կոթող), 2. կաս(կարմիր), 3. դույզն(ինչ), 4. լեռնա(դահուկային), 5. մանր(մունր), 6. փոխ(վարչապետ), 7. նետ(աղեղ), 8. դեմ(դիմաց), 9. թև(թիկունք):

47 **Ո՞ր նախադասություններում շաղկապի սխալ կիրառություն կա:**

1. Դու ոչ միայն դրժել ես խոսքդ, այլ դիմել ես սադրանքների, համախմբել դավադիր իշխաններին:
2. Հարցում եմ արել այդ ոլորտի բոլոր մասնագետներին, որպեսզի իմանամ՝ ինչ խնդիրներ կան:
3. Նա ոչ թե մտորում է մեր առաջարկած խնդիրների շուրջ, այլ նպատակ ունի դրանք ձախողելու:
4. Թեև արշավախումբը փլուզման պատճառով արտաքին աշխարհից լրիվ մեկուսացման մեջ էր հայտնվել, այնուհանդերձ ոչ մեկը խուճապի չէր մատնվել:
5. Անհրաժեշտ էր, որպեսզի հանձնաժողովը աշխատանքն ավարտի:

48 **Ո՞ր տարբերակներում է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

1. Երբ ձմռանը որևէ մեկը հիվանդանում էր, և <u>սիրտը մեղր էր ուզում</u>, ժլատ Հովհաննեսին չէին դիմում. գնում էին հարևան գյուղերը:
2. Յոթանասուն տարեկանի մոտ մարդ է նա, <u>հնարել է տարբեր գործիքներ</u>, որոնք բոլորն էլ օգտակար են:
3. Այդպիսի երկար զբոսանքների ժամանակ նա հագնում էր կապույտ տաբատ՝ զվարթությամբ ասելով, որ իր երկար հագուստը հարմար չէ թփուտների համար, և <u>պետք է այն փոխարինել մեկ ուրիշով</u>:
4. <u>Ոչ որի համար գաղտնիք չէր</u>՝ որտեղ էր թաքնվել այդ մարդը կամ ինչ նպատակներ էր հետապնդում:

49 **Հատվածներից որո՞նք են միջին հայերենով:**

1. Իմ եարն ի յերազիս եկաւ
   ի սիրուն զէտ հարբած եղայ.
   Յանկարծ ի քընոյս ելայ.-
   լուսնկա՜յ, ու խիստ կու ցոլայ:
2. Երնե՜կ, թե այս Նոր տարին
   Վերջ տար հայի ցավերին.
   Չարը կորչեր, ու բարին
   Բուն դներ մեր սրտերին:
3. Այլ կամք ի ձեռս անօրինի,
   Որ կու վարեն անգին գերի.
   Որքա՜ն քակեն եկեղեցի,
   Քանի՜ շինեն պիղծ մըզկիթնի...
4. Կ'ուզեմ մեռնիլ դյուցազնային
   Սիրո մ'համար աղջկա,
   Հետո աչերս վար կը նային,
   Ո՞ւր է այն Սերն, ա՜խ, չըկա...

50 **Նշել այն հատվածների համարները, որոնք Վ. Տերյանի բանաստեղծություններից են:**

1. Ե՛վ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ-
   Սև օրեր ես դեռ շա՜տ կտեսնեմ.
   Անունդ թող փարոս լինի ինձ
   Սուտ կյանքի և դառը մահու դեմ…
2. Դու պիտի հնչես, հնչես հաղթական,
   Իմ հին հա՛յ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ:
3. Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
   Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:
4. Մենք կժպտանք, գո՜հ կժպտանք մեռնելիս,
   Որ երազում երազեցինք ու անցանք…
5. Իջնում է գիշերն՝ անգութ ու մթին,
   Եվ այգը բացվում՝ դառն ու մահահոտ…

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ը:***

1) ան-ստգյուտ, ակ-նկալել, նոր-նտիր, դաս-նթաց
2) համ-նկնել, կոր-նթարդ, գործ-նկեր, մերթ-նդմերթ
3) ունկ-նդիր, գիրկ-նդխառն, հյուր-նկալ, դյուր-նթեռնելի
4) ան-նդհատ, առ-նթեր, թր-խկ, ինքն-ստինքյան

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է թավ գրված *ե*-ն արտասանվում *է:***

1) **ան**երկբա, ձայն**ե**րիզ, զորա**ե**րթ
2) քսան**ե**րեք, ամենա**ե**առանդուն, ան**ե**րկյուղ
3) սն**ե**րես, նրբ**ե**րանգ, բազկ**ե**րակ
4) ափ**ե**զր, համա**ե**վրոպական, ակն**ե**րև

53 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) ապաշնորհ–տաղանդավոր, կարծր–փխրուն, պիղծ–սուրբ
2) գիտուն–թերուս, նոսր–խիտ, ծածկամիտ–բացբերան
3) բուժիչ–ախտածին, օրհնել–բանադրել, խթանել–նպաստել
4) նշանակալի–չնչին, հիասթափություն–ոգևորություն, խելամիտ–անկշռադատ

54 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա միևնույն ածանցը:**

1) փոխհատուցել, փոխնիփոխ, փոխտնօրեն, փոխշահավետ
2) անդեմ, անդրադարձ, անդադար, անդատ
3) գերզգայուն, գերկարճ, գերխիտ, գերադաս
4) մակնիշ, մակբայ, մականախաղ, մակերևույթ

55 **Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության ո՞ր տարբերակում սխալ *չկա:***

Նույն վայրկյանին ներս մտան երկու մութ պատկերներ՝ գիշերային ոգիների նման լուռ, հապճեպ գրկեցին ճերմակ տեսիլքն ու չքացան նրա հետ:

1) **նման** – ածական, **վայրկյանին** – գոյական, որոշյալ առում
2) **չքացան** – ***ա*** խոնարհման սոսկածանցավոր բայ, **հետ** – մակբայ
3) **նույն** – ցուցական դերանուն, **ոգիների** – ***ու*** արտաքին հոլովման գոյական
4) **հապճեպ** – ձևի մակբայ, **նրա** – դերանուն, տրական հոլով

56 **Ո՞ր շարքում անկանոն բայ *չկա:***

1) գնալ, լինել, տանջել, մարել
2) թեքվել, սառչել, թողնել, մոռանալ
3) առնել, հյուսել, մտնել, գերել
4) հանգչել, կառչել, գտնել, իջնել

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

1) անգամ, սոսկ, թեև
2) մի՞թե, անկախ, ահա
3) գոնե, թերևս, անշուշտ
4) լոկ, իրոք որ, նույնքան

58 **Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր *չկա:***

1) Հենվելով ձեռնափայտին՝ ծերունին լարեց լսողությունը:
2) Արամը կարծում էր, թե կառավարիչը խաբում է իրեն:
3) Նրան հասավ կողքի սենյակից եկող քչփչոցը:
4) Տղան կարծեց՝ իր մասին են խոսում այն երկուսը՝ քննելով ստուգումներին վերաբերող դեպքերը:

59 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

1) Մի՞թե ինձ կասկածում ես, որ հսկում ես բոլոր քայլերիս:
2) Հայերը թշնամու դեմ կռվում լիակատար հաղթանակ տարան:
3) Խնդրի լուծումը կախված է երկու անձնավորություններից:
4) Նա համբերությամբ սպասում էր ամրոցը եզերող պարսպի երկաթյա դարպասներից մեկի բացվելուն:

60 **Ո՞ր բարդ նախադասության մեջ ժամանակի պարագա ստորադաս նախադասություն *չկա:***

1) Քանի դեռ երամակում այդ կարմիր հովատակն էր, ոչ մի օտար ձի սիրտ չէր անի մոտենալ երամակին:
2) Գետը հասնում է քարե այդ մաղին թե չէ, կորչում է:
3) Նայում եմ ամպին ու մտածում, թե Անդոն երբ է հասցրել ընկալել այդ ամենը:
4) Նրանք հավաքվեցին խարույկի շուրջը, հենց կրակի բոցերը մի փոքր մեղմացան:

61 **Պ. Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Ամե՜ն ինչից շատ, ամե՜ն ինչից վեր
Սիրում է կյանքում նա իր... աթոռը:
Աթոռն է սիրում
Ու նրան տիրում.
Ցանկացած գնով ելնում է նա վեր,
Փորձում է թռչել նա առանց թևեր,
Անվերջ սողալով առաջ է գնում...

1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
4) «Վարք մեծաց»

62 **Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի տրված հատվածում ո՞ւմ խոհերն են:**

«Ես իմ ընդդիմադրության համար դատապարտվեցա և աքսորվեցա… Բայց նախախնամության աջը երկար չի թողնի աքսորյալին այստեղ… Երբ նա ոտք կդնե հայրենի հողի վրա, դու կկրես քո պատիժը, նենգավո՜ր Բյուզանդիոն…»:

1) Արշակ Երկրորդի
2) Սահակ Պարթևի
3) Վասակ Մամիկոնյանի
4) Ներսես Մեծի

63 **Քանի՞ դերանուն կա տրված հատվածում:**

Ասում են, որ մի վտիտ մարդ՝ այլ տարազով, երեկոները, երբ հանդարտվում է քաղաքի աղմուկը, Աբովյան փողոցի վերջում սպասում է տրամվայի վագոնին: Տրամվայը նրան տանում է քաղաքից դուրս, և այդ մարդն անհանգստության նշաններ է ցույց տալիս, հենց որ երևում է բարձր լեռան գագաթը:

64 **Բառերից քանիսի՞ առաջին արմատն է միավանկ.**

ծանրաձող, սրարշավ, հրկիզել, օրավարձ, քաղցրահամ, կայարանամերձ, թռչնորս, ձնագնդի, ցլամարտիկ:

65 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծված անդամի պաշտոնը սխալ նշված:**

- Մինչև **հիսուն** տարեկանը նա ծխական դպրոցի ուսուցիչ էր: *(չափի պարագա)*
- Իր այդ **արարքի համար** հայրը մի քանի ամիս բանտ նստեց: *(նպատակի պարագա)*
- Նրան զարմացրեց **այն**, որ այդ ամբողջ հասարակությունը միաբան էր: *(ենթակա)*
- Երկար խոսեցին այդպիսի **վերաբերմունքի շուրջ** ու ոչ մի եզրակացության էլ չեկան: *(վերաբերության անուղղակի խնդիր)*

66 **Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Երբ մենք մտանք արվեստանոց(1) Մինասը վառեց բոլոր լամպերը և մեզ նայեցին նրա(2) ասես լույսից ծնված աշխատանքները: Ես շարունակ փորձում էի բնորոշել ինձ հետ կատարվածը բայց այդպես էլ չկարողացա: Այդ բառը միտքս եկավ շատ տարիներ անց(3) 1985 թվականին երբ արդեն վաղուց չէի փնտրում այն: Վենետիկում էր: Մենք(4) համերգային խմբի անդամներս դուրս գալով հյուրանոցից(5) շարժվեցինք դեպի Սուրբ Մարկոսի հրապարակ(6) մեր երթը ճշտելով բազմաթիվ ուղենշաններով(7) գրված եվրոպական գրեթե բոլոր լեզուներով(8) անգլերեն ֆրանսերեն գերմաներեն… Եվ հենց այնտեղ ես ակամա հիշեցի Մինասի նկարները և հասկացա որ նրա արվեստանոցում պայթյուն էր եղել(9) գույնի պայթյուն:

67 **Ո՞ր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:**

1. օրինապահ, 2. ժողովրդական, 3. միջնակարգ, 4. դարչնագույն, 5. սառցահատ, 6. ընչաքաղց, 7. ուսուցիչ, 8. կանխակալ, 9. մատենագիր:

68 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

21-րդ դարը ցույց տվեց, թե որքան կործանարար կարող են լինել կլիմայական փոփոխությունները: 2002թ. ջրհեղեղներից Եվրոպայում մի քանի հազար մարդ մահացավ. նույնը կարելի է ասել 2013թ. Ռուսաստանի արևելքում աշնանային հեղեղումների մասին: 2003-ի տապը եվրոպական մասում 35.000 մարդու մահվան պատճառ դարձավ: Գիտնականներն ավելի մռայլ կանխատեսումներ են կատարում ապագայի վերաբերյալ, ինչպես՝ արևադարձային Բրիտանիա, մալարիայով տառապող Ֆրանսիա, անապատային Իսպանիա: Բարեխառն գոտիներում սովորական բան կլինեն արևադարձային մոծակները, որոնց պատճառով դրանց բնակիչները կսկսեն վարակվել մինչ այդ իրենց անհայտ հիվանդություններով: Նախկինում անվնաս միջատները կդառնան կատաղի վնասատուներ՝ խիստ վտանգավոր գյուղատնտեսության համար, երաշտները կհանգեցնեն ջրի պակասի, հաճախակի կդառնան համաճարակները, մոլորակի վրա պայքար կգնա ավելի շատ սննդի և ջրի, քան էներգետիկ ռեսուրսների համար:

Վերջին հարյուրամյակում օդի ջերմաստիճանի բարձրացում է գրանցվել՝ 0,3-0,7 աստիճան: Եթե այս երևույթը շարունակվի, կհանգեցնի Սառուցյալ օվկիանոսի սառույցների հալեցման, երկրագնդի ողջ ջրային ծածկույթի մակարդակի բարձրացման և շատ վայրերի ջրասուզման: Կսկսվի դրանց բնակիչների մեծ տեղաշարժ մի վայրից մյուսը:

1. Երկրի ջրային ծածկույթի մակարդակի բարձրացումը կհանգեցնի աղետների և հատկապես էներգետիկ ռեսուրսների համար մղվող պայքարի սրացման:
2. Կլիմայական փոփոխությունները կբերեն ոչ անապատային որոշ վայրերի անապատացման:
3. 2000-ական թթ. խիստ շոգը հանգեցրեց մարդկային զգալի կորուստների:
4. Արևադարձային գոտիներում կարող են առաջանալ մոծակների նոր տեսակներ:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Պարզ են այն բայերը, որոնց կազմում չկա որևէ բայական կամ այլ ածանց:
2. ***Ն, չ*** սոսկածանցներն ընկնում են անցյալ կատարյալում, վաղակատարում, ենթակայականում և հարակատարում:
3. Պատճառական ածանց ունեցող բոլոր բայերը պատկանում են ***ե*** խոնարհման:
4. ***Ոտ*** ածանց ունեցող բոլոր բայերը բազմապատկական են:
5. Պատճառական ածանց ունեցող բայերի և ***ե*** խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևերը տարբեր կազմություններ ունեն:
6. ***Տալ*** բաղադրիչ ունեցող բոլոր բայերը պատճառական են:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հայերենի վերջածանցներն ավելի շատ են, քան նախածանցները:
2. Ածանցները և վերջավորությունները փոխում են բառի իմաստը և նոր բառ կազմում:
3. Բառի մեջ ածանցից առաջ ընկած մասը կոչվում է հիմք:
4. Բառը կոչվում է ածանցավոր, եթե ունի միայն մեկ արմատ և միայն մեկ ածանց:
5. Բառի հիմնական իմաստը արտահայտում է արմատը, որը բառակազմորեն անբաժանելի է:
6. Արմատները լինում են ինքնուրույն գործածություն ունեցող և ինքնուրույն գործածությունից զուրկ: